ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-26/08 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ձևով, էլեկտրոնային Armeps համակարգի միջոցով, գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի մասին

ք. Մարտունի

սկիզբ՝ «20» «ապրիլի» 2026թ.
ժամը 16:00
ավարտ «27» «ապրիլի» 2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Գնահատող անդամներ՝
Հանձնաժողովի նախագահ՝ Արտյոմ Քոչարյան
Անդամներ՝ Վահան Թամոյան, Թաթուլ Դավթյան
Բացող անդամներ՝ Սահակ Աբրոյան, Բորիս Գասպարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Էդվին Գրիգորյան

1. **Տեղեկություններ «ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին**

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են Armeps կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 20.04.2026թ-ին Մարտունու համայնքապետարանում, Շահումյան 2 հասցեում, ժամը 16:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

2. **«ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**

2.1 Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	**Մասնակցի անվանումը**	**Գործունեության հասցեն**	**Կապի միջոց Էլ. Փոստ, հեռախոսահամար**
1	«Շանթ-Սեյրան» ՍՊԸ, «Ճանապարհ» ՍՊԸ «կոնսորցիում	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Վաղաշեն, նախկին օդանավակայնի տարածք 1 ք.Երևան, Ավան, Աճառյան 60, շինություններ	shantseyran@mail.ru +37477411367 road@road.am +37410627240
2	«ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ գ. Լիճք Ա6 թղմ. 12փ, տ1	vardangroup@mail.ru +37493223288

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

Գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը մինչև 2026 թվականի ապրիլի 22-ը՝ հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության համար:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 22.04.2026թ. ժամը 09:30-ին

3. Տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահաջներին դրանց համապատասխանության մասին

3.1 Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝ արձանագրել է հետևյալը.

«Շանթ-Սեյրան» ՍՊԸ, «Ճանապարհ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահաջներին: Մասնավորապես՝

- **Կոնսորցիումի պայմանագրի 5-րդ կետում նշված է, որ կողմերը կրում են համապարտ պատասխանատվություն, սակայն պետք է լինի համատեղ և համապարտ:**

«ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահաջներին: Մասնավորապես՝

- **Հավելված 1.3-ում աշխատակազմում ներգրավված աշխատողների գործունեության ոլորտը և կատարված աշխատանքը լրացված չէ:**

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ Կարգ/ 41-րդ կետի պահաջներով, որոշեց՝ կասեցնել նիստը և ծանուցել մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում /ծանուցումը ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում/ շտկել արձանագրված անհամապատասխանությունները, մինչև 2026 թվականի հուլիսի 8-ը ժամը 23:59-ը ներառյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4. «ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակիցների առաջարկած գները

N	Կազմակերպության անվանումը	Նախահաշվային արժեքը /թվերով և տառերով/	Ինքնարժեք և շահույթ /թվերով և տառերով/	ԱԱՀ /թվերով և տառերով/	Ընդհանուր գինը /թվերով և տառերով/
Չափաբաժին 1		**130,142,853**	**ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա բնակավայրի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ**		
1	«ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ		**81 450 000**	**16 290 000**	**97 740 000**
2	«Շանթ-Սեյրան» ՍՊԸ, «Ճանապարհ» ՍՊԸ կոնսորցիում		**84 500 000**	**16 900 000**	**101 400 000**

*Մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 14.07.2026թ. ժամը 09:30-ին

5. «ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգի սույն արձանագրության 3-րդ կետով արձանագրությունների շտկման մասին.

22.04.2026թ., ոչ ավտոմատ ծանուցմամբ, վերոհիշյալ կազմակերպություններին ուղարկվել է անհամապատասխանությունները շտկելու ծանուցում, որը մասնակիցների կողմից շտկվել է և գնահատող հանձնաժողովը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված, «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 42-րդ կետի համաձայն, մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են բավարար:

6. **Գնահատող հանձնաժողովի կողմից «ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման արդյունքների գնահատման ամփոփման վերաբերյալ**

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

6.1 Ներկայացված գնային առաջարկների և հայտերի գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

6.2 Անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր՝ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի:

6.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և օրենսդրությամբ սահմանված կարգով, մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Նախագահ՝ _____ Արտյոմ Քոչարյան

Անդամներ _____ Վահան Թամոյան

_____ Թաթուլ Դավթյան

_____ Սահակ Աբրոյան

_____ Բորիս Գասպարյան

Քարտուղար՝ _____ Էդվին Գրիգորյան